

Ռ. Ս. Իսխանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վերջերս գիտական մամուլում նորանոր հաղորդումներ են լինում հայ հին տպագրության (մինչև 1800 թ.) անհայտ կամ մոռացված նմուշների վերաբերյալ¹։ Այդպիսով լրացվում է հայ հնատիպ գրականության մատենագիտությանը և ճշտվում մեր պատկերացումը հայկական տպագրության զարգացման մասին։

Նոր հայտնաբերված հնատիպերի հիմնական մասը 18-րդ դարի տպագրություններ են, մի աննշան մասն էլ 17-րդի։ Ինչ վերաբերում է 16-րդ դարի հայ տպագրությանը, ասպա այստեղ տասնյակ տարիներ է ինչ որևէ ճշտում կամ լրացում չի արվում։ Ամենաբարձր թիվը, որ նշվել է 16-րդ դարում կատարված հայերեն (կամ հայերեն տեքստ ունեցող) տպագրությունների համար 18-ն է՝ հետևյալ հաշվով. Հակոբ տպագրիչ՝ 5 գիրք, Արգար դպիր՝ 9²։ Սուլթանշահ և Տերղնցի միասին՝ 1, Տերպնցի առանձին՝ 1, Դ. Պոստել՝ 1 և Թեոֆիլ Լամբրոսիոս՝ 1³։

16-րդ դարի հայկական տպագրության այս քանակն ու հաշիվը տարիներ ընթացքում գրքից գիրք է անցել, հոգվածից հոգված, և մինչև օրս էլ մատենագետների ու բանասերների մոտ այն կարծիքը կա, որ եթե 17—18-րդ դարերի հայ տպագրության վերաբերյալ նոր և կարևոր հայտնագործություններ կարող են լինել, ապա մեր տպագրության առաջին դարն այնքան մանրամասն է ուսումնասիրված, որ հազիվ թե եղածի վրա հնարավոր լինի որևէ կարևոր նորություն ավելացնել։

Այժմ պարզվում է, որ այդ պատկերացումը ճիշտ չէ։

Վերջերս Մաշտոցի անվան Մատենադարանն ամերիկահայ գրասեր պալոն Ալբերտ Նալբանդյանից շնորհակալությամբ ստացավ նրա անձնական դրադարանում պահվող և մեր բանասիրությանն անհայտ հնատիպ գրքերի մի շարք լուսանկարներ։ Դրանցից երեքը պատկերում են 16-րդ դարում տպագրված գրքեր. երկուսը օտար լեզվով (լատիներեն և գերմաներեն), որ ունեն հայերեն տեքստեր, իսկ մեկը՝ Արգար դպիրի որդի Սուլթանշահի տպագրած մի բնագիր է՝ հայերեն և լատիներեն։

Մեր մատենագիտության մեջ մինչև այժմ խոսք է եղել 16-րդ դարում օտար լեզվով տպագրված և հայերեն տեքստ ունեցող երկու ուրիշ գրքերի



¹ Օրինակ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 5, էջ 39—52, 1963, № 2, էջ 65—78, «Պատմա-բանասիրական հանգիստ», 1963, № 1, էջ 262—266, «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 426—436, № 5, էջ 513—526, «Էջմիածին», 1963, № 1 (հունվար), էջ 52—61։

² Արգարի տպագրած Ժամագիրքը և Պատմաբանությունը, թեև տարբեր դրբեր են, բայց լույս են ընծայվել որպես մի գիրք (ապակից)։ Այս հրատարակությունը մեկ տպագրական միավոր հաշվելու դեպքում Արգարի մեկ հասած տպագրությունների քանակը լինում է 8։

³ Տե՛ս Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, 1958, էջ 74, նաև՝ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1962, № 5, էջ 41 և այլն։ Որոշ հեղինակներ (Ա. Երիցյան, Լևոն Գ. Զարբանավյան, Թևոգիկ) նշում են 16-րդ դարում տպագրված շատ ավելի քան 10—15 հայերեն գրքեր։

մասին. մեկը ֆրանսիացի Գ. Պոստելի «Linguarum»-ն է, որ 12 լեզվի, այդ թվում նաև հայերենի նկարագրություն է (հայերեն տպագիր նմուշներով). տպված Փարիզում, 1537-ին, մյուսը՝ իտալացի Թեոֆոս Ամրոսիոսի «Introductio»-ն է (Ներածություն), ուր ի թիվս այլ լեզուների նույնպես՝ կան հայերեն փոքր տեքստեր:

Այժմ այս երկուսի վրա ավելանում են այդ կարգի ևս երկու գիրք. Իսկ Սուլթանշահի տպագրությունը պետք է դասել զուտ հայերեն հրատարակու-



նկ. 1. Սարկանաոնիոս Կոլոնացու գրքի հայերեն ընագրի սկիզբը. Հոռմ, 1886

թյունների շարքը: Մինչև այժմ մենք գիտեինք Սուլթանշահի տպագրած (Տեր-ղնցու հետ միասին) միայն «Տոմար Գրիգորեան»-ի մասին (Հոռմ, 1584), այժմ ահա դրան է ավելանում ևս մեկը:


Ստորև տալիս ենք հիշյալ երեք գրքերի համառոտ նկարագրությունները ըստ հիշյալ լուսանկարների.

1. Կանոն օրհնության աղի և ջրի:—Արհնություն աղի և ջրի յաուրս կիրա-կելից: Զետեղված են ստորև բերված գրքում:

Տիտղոսաթերթը լատիներեն է՝ M. ANTONII MARSILII COLUMNAE BONONIENSIS I C. Archiepiscopi Salernitani HYDRAGIOLOGIA Sive De Aqua Benedicta. Ad S. D. N. D. SIXTUM V. Pont. Opt. Max. Cum Privilegio Summi Pontificis. ROMAE, Typis Bartholomæi Bonfadini. MD LXXXVI [1586] EX AUTORITATE SUPERIORUM.

Հայերեն ընագիրը սկսվում է 492 էջից «Կանոն օրհնության աղի և ջրի» վերնագրով (նկ. 1) և վերջանում 504 էջում Սուլթանշահի հիշատակարանով

(նկ. 2), որի սկիզբն է «Յարդարեանց սուլտան մարդանտոնիցս⁴ ընթերձողաց զրիս ողջոյն ի Տէր», այնուհետև խոսելով հրատարակվող երկու կանոնների մասին՝ հիշատակարանն ավարտում է. «Տպագրեցաւ ի մեծն Հոռմ սեպտեմբեր Ե թվ. ծնրնդեան Քրիստոսի ոչձգ» (=1586): Գիրքը տպագրված է «Տոմար Գրիգորեան»-ի տառերով (հետադայում Ուրբանյան տպարանի տառեր):




Նկ. 2. Մարկանտոնիոս Կոլոնացու գրքի հայերեն բնագրի վերջում Արդար զպիրի որդի Սուլթանշահի տպած հիշատակարանը

Հայտնի է, որ տպագրիչ Հովհ. Տերղնցին 1584-ին Հոռմում «Տոմար Գրիգորեանը»՝ Սուլթանշահի հետ միասին լույս ընծայելուց հետո՝ անցնում է Վենետիկ և 1587-ին այնտեղ մի Սաղմոսարան տպագրում: Մինչ այժմ պատկերադրումն այն էր, որ 1584-ից հետո մինչև հաջորդ դարը Հոռմում հայերեն

⁴ Հոռմում Սուլթանշահը Մարկանտոնիոս էր կոչվում, նրան շպետք է շփոթել ներկա գրքի՝ Եղիսակի հետ, որի անունը նույնպես Մարկանտոնիոս է:

տպագրությունը գազարում է: Այժմ պարզ է դառնում, որ Սուլթանշահը Տերզըն-ցու հեռանալուը հետո էլ չի հրաժարվում տպագրական աշխատանքից և նրա գնալուց մի տարի անց զլուխ է բերում ևս մի հայերեն հրատարակություն Հռոմի մեջ (մինչև այժմ «Տօմար Գրիգորեան»-ից հետո Հռոմում տպագրված հաջորդ հայերեն գիրքը համարվում էր «Աիբուրենք Հայոց»-ը՝ 1623 թ.):




Նկ. 3. Թուրնայգերի գրքի (1583 թ. տպագր.) մի էջը հեղինակի նկարով և հայերեն տպված ընագրով

2. Մյուս լուսանկարում և. Թուրնայգերի (Leonharten Thurneisser Zum Thurn)⁵ գիրքն է, որը տպվել է 1583-ին, բաղկացած է երկու մասից, երկու տիտղոսաթերթով: Առաջինն սկսվում է ΜΕΓΑΛΗ ΧΥΜΙΑ. VEL MAGNA

⁵ Leonharten Thurneisser-ը (1530—1596) եվրոպայում, Աֆրիկայում և Արևելքում ճանապարհորդած գերմանացի գիտնական է, որ ունեցել է իր սեփական ապարանը:

ALCHYMIA. Das ist ein Lehr und unterweisung von den offenbaren und verborgenlichen Naturen, Arten... վերջում՝ Gedruckt zu Berlin durch Nicolaum Voltzen, Anno 1583 երկրորդը՝ ...ΚΑΙ ΕΡΜΗΝΕΙΑ Das ist ein Onomasticum und Interpretatio oder auszutunliche Erklerung. վերջում հրատարակման նույն տվյալներն են (Ինդիք, 1583) :




Նկ. 4. Թուրքայի գրքի 157-րդ էջը հայերեն տպագրությամբ

Գրքի երկրորդ մասում տրված են 32 եվրոպական և 68 ալլ լեզուներից, այդ թվում նաև հայերենից նմուշներ (տե՛ս նկ. 3, 4): Դրանք Մատթեոսի Ավետարանի երանութուններն են (Մատթ. Ե, 3—12)՝ մի ղեկաքում (նկ. 3) վերջի մասը (երանի որ հայածեալը իցեն), մյուսում (նկ. 4)՝ լրիվ: Տեքստում կան սխալներ և շեղումներ Ավետարանի հայերեն ընդունված ընագրից: Տառաձևերի զգալի մասը անսովոր է:

3. Bry J. Th. Alphabeta et characteres, iam inde a creato mundo nostra usq(ue) tempora... վերջում՝ Frankfurt, 1596.

Գիրքը պարունակում է շուրջ 90 տարբեր այբբենների նմուշներ, այդ թվում նաև՝ հայկական այբբենը (տե՛ս նկ. 5)։

16-րդ դարի հայ տպագրության վերաբերյալ մեր պատկերացումն ավելի հստակ դարձնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ երկու հանգամանք ևս։ Նախ այն, որ, ինչպես դեռևս 1912 թվականին պարզել է Գ. Գալեմբյարյանը⁶, Հռոմում ըստ էության առաջին տպագրությունը եղել է 1579-ին, այսինքն՝ «Տօմար Գրիգորեան»-ից հինգ տարի առաջ։ Դա ֆրանսիացի փորագրիչ Ռոբերտ Գրանժոնի (Granjon) կողմից պատրաստված հայերեն նոր տառերով կատարված փորձնական մի տպագրություն է 35×25 մեծության թղթի վրա։ Այն սկսվում է լատիներեն. Armenici Characteres և այլն։ Ապա հայերեն՝ «Հրամանաւ ամէնասուրբ տեառն մերոյ տէր Գրիգոր Երրորդատաւան Հռոմա-



Նկ. 5. 1596-ին տպագրված հայկական տառաձևեր

յեական Փափուն։ Շինեցաւ և կատարեցաւ այս նոր գիրս եւ պատմաս ի մեծն սուրբ եւ հրրչակաւոր մայրաքաղաքն Հռոմայ, ընդ հովանեաւ սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պողոսի։ Ի ծնրնդեան Տեառն և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. ոչհթ և թվականէ մեծի հայոց ոիր ամին...»։ Որպես նմուշներ բերված են նաև հայերեն տարբեր հատվածներ, վերջում փորագրիչի անունն է և նորից նույն թվականը։

Անշուշտ, սա հայերեն տպագրություն է, ինչպես որ Արդարի փորձնական Խառնայ փնթուր կոչվող օրացուցը, որ նույնպես տալիս է մի թերթի վրա։

Այնուհետև, պետք է նկատի ունենալ նաև Կ. Գաբրիկյանի հաղորդումը «Բյուզանդիոնի» 1906 թ. 2963 համարի մեջ, ուր խոսք կա այն մասին, որ հեղինակը Սերաստիայում տեսել է հայ առաջին տպագրիչ Հակոբի «Պարզատու մարի» ու «Աղթարքի» տառերով տպագրված մի Սաղմոսարան։ Գաբրիկյանի հիշյալ հոդվածը ամբողջությամբ այնքան զգուշ ու բարեխղճորեն է կազմված,

⁶ «Հանգես ամսօրյա», 1914, էջ 17—22։

որ նրա հաղորդման վրա կասկածելու որևէ հիմք չունենք: Բացի այդ կան նաև ալ սլատճառներ (ինչպես, օրինակ, այն, որ կաթոլիկական երկրներում հայ հին տպագրիչներն իրենց գործը սովորաբար սկսում էին Սաղմոսարանի տպագրությամբ), որոնք ստիպում են հավատալ Գարիկյանի հաղորդածին⁷: Ավելացնենք նաև, որ Հակոբի կողմից Սաղմոսարանի տպագրման փաստը ընդունում է նաև բանասեր Դ. Գալմաթյարյանը⁸:

Այսպիսով, ի մի բերելով 16-րդ դարի մինչ այժմ մեզ հայտնի բոլոր հայերեն տպագրությունները, ստանում ենք հետևյալ սլատկերը՝ ժամանակագրական հերթականությամբ:

	Անուն	Քաղաք	Տպարան կամ տպագրիչ	Թվական
1	Սաղմոսարան	Վենետիկ	Հակոբ Մեղապարտ ⁹	1509 (*)
2	Ուրբաթագիրք	»	»	1509 (*)
3	Աղթարք	»	»	1510 (*)
4	Գարգառումար	»	»	1512
5	Գատարագատետր	»	»	1513
6	Տաղարան	»	»	1513 (*)
7	Գոսակ Linguarum	Փարիզ	Ք. Գոսակ	1537
8	Ք. Ամրոսիոս Introductio	Բավիա	Ք. Ամրոսիոս	1539
9	Խառնայ փնթուր տոմարի (օրացույց)	Վենետիկ	Արղար դպիր (կամ նրա տառերով) ¹⁰	1565
10	Սաղմոսարան	»	»	1565
11	Փոքր քերականութիւն	Կ. Գոյիս	»	1567
12	Գարգառումար	»	»	1568
13	Ժամագիրք	»	»	1568
14	Գատա աղամատոյց	»	»	1568
15	Տօնացոյց	»	»	1568 (*)
16	Տաղարան	»	»	1568 (*)
17	Մաշտոց	»	»	1569
18	Armenici Characteres (հայ տառեր) ¹¹	Հռոմ	Ռոր. Գրանժոն	1579
19	L. Thurneisser... Kal Éρ- μεγνεία...	Բեռլին	N. Voltzen և Թուրնայ-գեր (*)	1583
20	Տօմար Գրիգորեան	Հռոմ	Dominici Bisae	1584
21	Կանոն օրհնութեան... — Մարկանտոնիոս Կոլո- նացի Hidragiologia, էջ 492—501.	»	Bartholomaei Bonfadini	1586
22	Սաղմոսարան	Վենետիկ	Հովհ. Տերդնցի	1587
23	J. Th. Bry Alphabet et characteres	Ֆրանկֆուրտ	»	1596

Եվ այսպես, ներկայումս մեզ հայտնի են 16-րդ դարի 23 հայերեն տպագրություններ, որոնցից 19-ը հայերեն հրատարակություններ են, իսկ չորսը՝ օտար լեզվով, բայց հայերեն տեքստերով¹¹:

⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1963, № 7:

⁸ «Հանդես ամսօրյա», 1913, էջ 712:

⁹ Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերի ժամանակագրության մասին տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1963, № 7 և «Գրական խերթ», 1963, № 22:

¹⁰ Արղար դպրի տառերով Կ. Պալում տպագրված գրքերից մի քանիսի հիշատակարանում Արղարի փոխարեն ուրիշ անուններ են դրված, և դիտես պարզելու կարոտ է այն հարցը, թե ո՞վ է այդ գրքերի իրական տպագրիչը՝ Արղարը, թե՛ մի ուրիշը:

¹¹ Մատենագիտական ցանկերում մեզ հանդիպած 16-րդ դարի տպագրություն համարվող որոշ գրքեր շղթայիցն ալ ցուցակում, քանի որ մեզ անհասկանալի թվաց նրանց գոյությունը: Օրինակ, Տ. Պալյանը (Կապես) մի տեղ («Բանասեր», 1905, էջ 207) հիշատակում է 1565-ի տպագրված «Յիսուս որդի», որը մեզ թյուրիմացության արդյունք է թվում:

Հարգարժան պր. Ա. Նալբանդյանի շնորհիվ հայտնի գարձած վերոհիշյալ հրատարակություններից, թերևս, ամենից հետաքրքրականը Մարկանտոնիոս Կոլոնացու Hydragiologia գրքի մեջ Սուլթանշահի ջանքերով ղետեղված ծիսական երկու կանոններն են (որոնք հայկական «Մաշտոցի» տպագիր հրատարակությունների մեջ չեն մտել)։ Այդ գրքի (էջ 490) հայկական բաժնի սկզբում կան Թագեոս և Բարթուղիմեոս առաքյալների նկարները, հաջորդ էջում լատիներեն ներածություն է՝ նվիրված հայերեն բնագրին։ Բացի հայերենից գրքի մեջ կան նաև արաբական և քաղղեական լեզուներով բնագրեր։ Գրքի նպատակն է կաթոլիկություն քարոզելը։ Հայերն էլ, երևի, իրենց նպատակն են հետապնդել՝ գրքի մեջ հայերեն ծիսական կանոններ ղետեղել տալով, այն է՝ որոշակի քաղաքական նկատառումներով ցույց տալ հայ և կաթոլիկ եկեղեցիների դավանական ընդհանրությունը։

Ինչ վերաբերում է Թուրնայգերի գրքին, ապա այն պետք է դասել Եվրոպայում նոր ձևավորվող հայագիտության առաջին տպագիր աշխատությունների շարքը։ Հետաքրքիր է, որ Ֆրանսիացի Գ. Պոստելը, իտալացի Թեսեոս Ամբրոսիոսը և գերմանացի Լ. Թուրնայգերը՝ որպես Արևելքով հետաքրքրվող եվրոպացիներ ընդհանուր շատ բան ունեն։ Երեքն էլ սահմանափակվել են իրենց հայրենակիցներին արևելյան լեզուների ու այբբենների մասին սոսկ հակիրճ ծանոթություններ տալով՝ տպագրելով այդ լեզուներից փոքրիկ նմուշներ։ Սա այն օրերի տպագիր արևելագիտության և մասնավորապես հայագիտության մակարդակն էր ու, թերևս, այդտեղ պետք է փնտրել հետագայում Եվրոպայի մեջ այնպիսի ծաղկման հասած հայագիտության ակունքները։